ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/25» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 25.01.2019թ.
ժամը 16^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետի ՊԺԿ Ա. Նազարյանը,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի սպա բ/ծ մայոր Մ. Գալստյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Ա.Սահակյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/25» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա.Սահակյան)

1.1 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/25» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից՝

ա) 2-րդ չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է հստակեցնել թեստերի քանակը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը,

բ) 29, 30, 31-րդ չաբաբաժինների համար ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում է գործարանային փաթեթավորման մասին տեղեկատվությունը,

գ) 1, 2, 13, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 26, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 53, 54, 56, 57, 58 և 59-րդ չափաբաժինների համար ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում է ապրանքների՝ Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրերի (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները), արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագրի (ISO, GMP, CE Mark կամ այլ), արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագրի, նշված փաստաթղթերի (պատճենների)՝ մատակարարման ժամանակ ներկայացնելու, ինչպես նաև պիտանելիության ժամկետի (այն ունենալու դեպքում) մասին տեղեկատվությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցել է առաջին տեղը զբաղեցրած

մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով գնահատող հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.2 01.02.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/25» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/25» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Սահակյան)

Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Վ. Վահանյան
Գնահատող	Մ. Գալստյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնումները համակարգող	Ա. Սահակյան